Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 2026-2027 ՈՒՍՏԱՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021401.01.6 «ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

«Դեկորատիվ կիրառական արվեստ» բաժնի շրջանավարտները ստանում են արվեստի բակալավրի որակավորում:

Ուսման տևողությունը չորս տարի է: «Դեկորատիվ կիրառական արվեստ» բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, նկարչական ունակություններ ու հմտություններ, որոնք համապատասխանում են քննությունների պահանջին:

Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից երկու քննություն՝

«Գծանկար» և «Կոմպոզիցիա»:

«ԳԾԱՆԿԱՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքն է՝ նատյուրմորտ հարթ ֆոնի վրա 2-3 գիպսե առարկաներից, գրաֆիտե մատիտով պարզ լուսավորությամբ:

Բնօրինակի ճիշտ տեղադրում թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտում, տրված լուսավորության պայմաններում արտահայտել ծավալները և տալ բնօրինակի նմանության բնութագիրը:

Նյութը՝ գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ:

Թուղթը՝ 60x40 սմ չափի:

Կատարման տևողությունը 8 ակադեմիական ժամ (2 օր՝ 4-ական ժամ):

«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Առաջադրանքի ճիշտ տեղադրումը թղթի վրա, առաջադրանքը կազմող մասնիկների չափի, գույնի ներդաշնակության խնդիրների, սիմետրիայի, ռիթմի, տարածականության արտահայտումը:

«Կոմպոզիցիա» առարկայի քննության ժամանակ հանձնարարվում է հետևյալ առաջադրանքը՝

- կատարել զարդանախշ կամ դեկորատիվ կոմպոզիցիա /առաջարկվող թեմաների տարբերակներով/:

Նյութը՝ ջրաներկ, գուաշ, թուղթը՝ 60x40 սմ չափի:

Կատարման տևողությունը 4 ակադեմիական ժամ 1 օրում:

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Քննություններն անց են կացվում 3 օրվա ընթացքում (2 օր գծանկար, 1 օր կոմպոզիցիա):

Քննության ներկայանալիս դիմորդը իր հետ պետք է ունենա.

1. Նկարչական տախտակ 60x40 սմ չափի թղթի համար
2. Նկարչական 60x40 սմ չափի 2 թերթ (գծանկարի և կոմպոզիցիայի համար)
3. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների
4. Ռետին, սրիչ, քանոն, կարկին, կոճգամներ
5. Ջրաներկ, գուաշ, ջրաներկի վրձիններ տարբեր չափերի, փորձաթղթեր, ապակյա ջրամաններ (նկարչական նյութերը ըստ դիմորդի ընտրության)

021401.01.6 «ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՈՒՆՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«ԳԾԱՆԿԱՐ»

1. Թղթի մեջ առաջադրանքի ճիշտ տեղադրում և չափի որոշում 0-5 միավոր
2. Առաջադրանքի կազմող առարկաների և նրանց մասնիկների համաչափությունների արտահայտում: 0-5 միավոր
3. Աշխատանքում լուսաստվերային, ծավալային խնդիրների և հեռանկարի արտահայտում 0-5 միավոր
4 Առաջադրանքը կազմող առարկաների նյութականության արտահայտումը և գրաֆիկական կատարողական կուլտուրան: 0-5 միավոր

Ընդամենը 20 միավոր

«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»

1. Առաջադրանքի ճիշտ տեղադրումը թղթի վրա 0-5 միավոր
2. Առաջադրանքը կազմող մասնիկների համաչափությունների ներդաշնակություն 0-5 միավոր
3. Սիմետրիայի և ռիթմի ճիշտ կառուցում 0-5 միավոր

4. Կատարողական գրաֆիկական կուլտուրան և նյութի հետ վարվելու վարպետությունը 0-5 միավոր

Ընդամենը՝ 20 միավոր

021401.01.6 «ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1-ին քննություն - «Գծանկար»

2-րդ քննություն - «Կոմպոզիցիա»

Երկու քննությունների ընթացակարգերը նույնատիպ են: Քննությունները անցկացվում են գծանկարը երկու օրում 4-ական ակադեմիական ժամ տևողությամբ, կոմպոզիցիա՝ մեկ օրում 4-ական ակադեմիական ժամ տևողությամբ:

Տվյալ օրվա քննության բոլոր դիմորդները քննասենյակներում իրենց նստատեղերը զբաղեցնում են վիճակահանությամբ: Երկրորդ օրվա քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում, ծածկագրվում են պատասխանատու քարտուղարի կողմից և հանձնվում առարկայական քննական հանձնաժողովի նախագահին գնահատման համար:

Գնահատման ավարտից հետո կատարվում է աշխատանքների ապածածկագրում և գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ: